№ 83 Մայիսի 9 (21) 1881 Մայիսի 9 (21) № 83

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուսաւորութիւն և տնտեսական ոյժ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ս. Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Բօլգարիա. Աւստրօ-Ունգարիա. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դաւիթ բէկ.

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՅԺ

III

Մեր անցեալ յօդուածները կարդալով, ընթերցողը մեզ կարող է ասել. „Ի՞նչ է մեզ երաշխաւոր որ ձեր հայեացքները սխալ չեն, որ դուք Հայաստանի պէտքերի վրա խօսելով չէք սխալվում։“

Գուցէ այդ նկատողութիւնը արդար է, բայց այն ժամանակ կարող ենք հաստատ ասել որ Կ. Պօլսի հայերը, Հայաստանից աւելի էլ հեռու լինելով քան թէ մենք, մեզանից աւելի էլ անջատված լինելով իրանց հայրենիքից,—մեզանից էլ աւելի քիչ գիտեն թէ ի՞նչ է Հայաստանի անհրաժեշտ պահանջը։

Ճշմարիտ է մեր ինտելլիգենցիայի մեծ մասը Թիւրքաց Հայաստանը չէ տեսել, բայց այստեղ, Անդրկովկասում, ռուսաց Հայաստանում և Վրաստանում, մենք մեր աչքերի առաջ ունենք հայ գիւղացիներ, հայ արուեստաւորներ, ծանօթ ենք հայ վաճառականութեան, հայոց ժողովրդական թէ քաղաքային և թէ գիւղական դպրոցների հետ, հայոց հասարակական կեանքի հետ, վերջապէս ապրում ենք բաւական խիտ բնակված հայ տարրի մէջ, ճանաչում ենք նրա բարք ու վարքերը, նրա կեանքի պայմանների ու պահանջները և համեմատութեամբ գտնելով՝ կարող ենք եզրափակել թէ ի՞նչ է հայի դրութիւնը, նրա պահանջը Թիւրքաց Հայաստանում։ Մեր մամուլն էլ Ռուսահայաստանի ամեն անկիւններից մեզ ծանօթացնում է հայ տարրի կեանքի հետ, ուսումնասիրելով գլխաւորապէս Երևանի նահանգի հայ տարրը, որտեղ հայերը աւելի խիտ են բնակվում քան թէ Թիւրքաց Հայաստանում։

Այդ բոլոր աջող հանգամանքներից զուրկ է Կ. Պօլսի հայ ինտելլիգենցիան. Թիւրքաց մայրաքաղաքը Բիւզանդիայի հողի վրա գտնվելով և կտրված լինելով ահագին տարածութեամբ Հայաստանից, Կ. Պօլսի հայ ինտելլիգենցիան երբեք իր կեանքումն էլ չէ տեսել մի հայ գիւղ, երբեք չէ տեսել մի հայ գիւղացու արօրը ձեռին, այլ տեսել է նրան միայն որպէս Կ. Պօլսի փողոցների բեռնակիր՝ փալանը մէջքին։ Կ. Պօլսի հայ մամուլը մինչև վերջին ժամանակները զուրկ էր Հայաստանից ստացվող հայ տարրի տնտեսական կամ հասարակական կեանքը նկարագրող թղթակցութիւններից, պօլսեցին ճանաչում էր Հայաստանը միմիայն բանաստեղծական, իրականութիւնից զուրկ նկարագրութիւնների միջոցով....

Եւ ահա Հայաստանից կատարելապէս անջատված, նրան բոլորովին օտար Կ. Պօլսի մէջ հիմնվում են ընկերութիւններ, որոնք յանձն են առնում առաջնորդել Հայաստանի բարոյական և մտաւոր բարւոքման գործը և որոնց անդամներից ոչ մինը երբեք Հայաստանում չէ եղել, ոչ մինը հայաստանցի չէ։

Կ. Պօլսից հրահանգներ կազմել Հայաստանի ուսման և Հայաստանի հասարակական բարւոքման համար,—անհնարին է։ Թող Կ. Պօլսի ինտելլիգենցիան, եթէ կամենում է գործել Հայաստանի համար, վերադառնայ Հայաստան, նախ ուսումնասիրէ այդ երկիրը, նրա անհրաժեշտ պէտքերը և ապա այդ պէտքերին համեմատ հրահանգներ կազմի և սկսի գործել։

Կ. Պօլսի ազգային ժողովը իր մէջ չէ պարունակում Հայաստանի շահերը ներկայացնող տարրեր, Կ. Պօլսի ազգային գրականութիւնը մինչև վերջին ժամանակները հարստանում էր Ալէքսանդր Դիւմայի և Վիկտոր Հիւգօի վէպերի թարգմանութիւններով, մենք չը տեսանք Թիւրքաց մայրաքաղաքի տպարաններից դուրս եկած ոչ մի հայոց գիրք, որ ուսումնասիրած լինէր Հայաստանի վիճակագրութիւնը, նրա ազգագրութիւնը, որ ներկայացնէր մեզ հայրենիքի քաղաքատնտեսական նկարագիրը, ոչ մի ինքնուրոյն վէպ, ռոման ազգային ժամանակակից հասարակական կեանքից չը ստեղծագործեց պօլսեցի հայի հանճարը... Միակ ազգային գրականական ստեղծուածները՝ այն փտած, անիմաստ, անշնորհ պատմական ռոմաններն ու թատրօնական գըրուածներն են, որոնց այնքան առատութեամբ ընծայում է մեզ իրական հողից դուրս, ռոմանտիկական ոգով կրթված պօլսեցին....

Նախ պէտք է ուսումնասիրել մի երկիր և ապա նրա վրա ներգործել կրթողական կերպով և նրանից օգուտ քաղել։ Պարզ է որ ուսումնասիրած չը լինելով Հայաստանը, պօլսեցի հայը չէր կարող ոչ ներգործել իր երևակայութեան մէջ միայն կեանք ունեցող հայրենիքի վրա, չէր էլ կարող ուրիշ կողմից շահվել այդ հայրենիքից։ Երբ էք տեսել որ Կ. Պօլսում կազմվէր մի ընկերութիւն Հայաստանը գիտնականապէս ուսումնասիրելու համար, կամ օգտվելու համար երկրի բնական բերքերից, Հայաստանի բնական բերքերը վաճառահանելու և նրա արդիւնաբերութեան աւելի լայն զարգացմանը նպաստելու....

Երկուսից մէկը. թող Կ. Պօլսի հայերը կամ խոստովանվեն որ չեն ճանաչում Հայաստանը, չեն կարող իրանց հայրենիքին ոչինչ օգուտ տալ, ուրեմն կատարելապէս հրաժարվեն Հայաստանի վրա ներգործութիւն ունենալու և նրան առաջնորդելու գիտաւորութիւնից,—կամ եթէ անկեղծ կերպով կամենում են ծառայել իրանց ազգին, թող վերադառնան Հայաստան։

Բայց ինչ ճանապարհով պէտք է կատարվի այդ վերադարձը դէպի հայրենիքը,—այդ մենք կը բացատրենք մեր հետևեալ յօդուածում։

Գ. Ա.

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

Թ.

Դաւիթ ուրացողին կալանաւորելուց յետոյ Տաթևի վիճակը ազատվեցաւ մի չարագործից։ Այդ նոր Վասակը, որ Ֆաթալի խանի աջ ձեռքն էր, հէնց որ լսեց բէկի Սիսիանի մէջ կատարած յաղթութիւնները, հէնց որ իմացաւ նրա Տաթևին մօտենալը, պատրաստվեցաւ առաջն առնել։ Նա հաւաքեց իր ձեռքի տակ գտնված պարսկական զօրքերը, և տեղային հայերից ես բաւական բազմութիւն ստիպմամբ պարսիկների հետ միացնելով, աշխատում էր թոյլ չը տալ բէկին Տաթևի սահմանը մտնել։ Հօրը աջակցում էր Շահկուլի անունով որդին, որ ծնված էր պարսիկ կնոջից։

Բէկի հրամանի ներքոյ, ինչպէս մեզ յայտնի է, այդ ժամանակ կային մօտ 500 զինված մարդիկ. իսկ ուրացողի ուժերը հնգապատիկ աւելի էին։ Նրանք բռնել էին դէպի Տաթև տանող ճանապարհների բոլոր անցքերը։

Բէկը նստած էր իր սառուլար *) ձիու վրա, որ Սիւնեաց աշխարհի ամենաընտիր նժոյգների տեսակից էր։ Նա գնում էր ամենից առաջ, շրջապատած իր թիկնապահներով։ Նրա կողքին ձիավարում էր Ներսէս արքեպիսկոպոսը։ Ճանապարհը ընկած էր նեղ ձորի միջով, որ իր դըժուարին ելևէջներով երբեմն բարձրանում էր լեռների բարձրաւանդակների վրա, իսկ երբեմն իջնում էր խորին անդունդների մէջ։ Սարերը պատած էին անթափանցելի անտառով։ Ամեն բոպէ կարելի էր սպասել խիտ ծառերի ետևից դարանամուտ թշնամու հրացանի արձակվելը և գնդակի սլացումը։

Բայց բէկը, այդ զգոյշ, շրջահայեաց զինուորը, կարծես, ուշադրութիւն չէր դարձնում։ Նա լուռ էր և մտախոհ։ Ակամայ տխրութիւնը, որ տիրել նրա սրտին, համարեա մոռանալ էր տուել, թէ ինչ վտանգաւոր տեղում է գտնվում ինքը, ուր ամեն մի քար, ամեն մի ժայռ, ամեն մի թուփ ու ծառ մահ էին սպառնում անզգուշին։ Նա մինչև անգամ մոռացել էր այն զինված բազմութիւնը, որ նրա ետևից գալիս էր։

Նրա աչքի առջև տարածվում էր իր ծննդավայրը՝—Տաթևի երկիրը։ Բոլոր լեռները, անտառները, ձորերը ու հովիտները ծանօթ էին նրան։ Բոլոր ճանապարհները, ամենաաննշան շաւիղներն անգամ գիտէր նա։ Այդ լեռների վրա, իր մանկութեան օրերում, արածացնում էր նա իր հօր այծերը։ Այդ անտառներում իր ընկերների հետ քաղում էր նա զանազան տեսակ պտուղներ։ Այդ սրնթաց, փրփրացող գետակների մէջ շատ անգամ լողացել է նա։ Բոլորը մնացել էր մի և նոյնը. ոչինչ չէր փոխվել. փոխվել էր միայն ինքը...

Շուտով կը տեսնէր նա Տաթևի աւանը։ Գուցէ դեռ ես չէր մնացել իր հայրական խրճիթը, որի մէջ անցուցել էր իր մանկութեան անհոգ, պայծառ օրերը։ Բայց ովքեր էին բնակվում այժմ այն խրճիթի մէջ։ Ովքեր և բնակվէին, բայց նրանցից և ոչ մէկը այն չէր լինելու, որին նա կը փափագէր տեսնել։

Ծանօթ առարկաները զարթուցին նրա մէջ տխուր յիշողութիւններ։ Արդեօք կը տեսնէր այն մօրը, որ այնքան քնքուշ սրտով սիրում էր իրան։ Արդեօք կը տեսնէր այն հօրը, որ այնքան բարի էր, որ իր չքաւորութեան և դժբախտութեան մէջ ես դարձեալ գիտէր լաւ կրթել, մեծացնել սիրելի որդուն։ Ո՞րտեղ էին նրանք։ Ինքը չի պիտի կարողանար ուրախացնել նրանց, տալով. «տեսէք, ահա ձեր որդին, վերադառնում է ձեզ մօտ փառքով ու պատւով. գրկեցէք նրան»։

Նա յիշեց Ֆաթալի խանի բռնակալը, յիշեց այն կրակը, որի մէջ այրվեցան իր հայրը, իր մայրը, իր ազգականները... Յիշեց այն մարդուն, որ իր ծնողների մահուան պատճառ դարձաւ։ Այսօր նոյն չարագործը պարսիկ զօրքերով կանգնած էր իր ճանապարհի վրա, որ արգելէ նրան իր հայրենիքի գոնէ աւերակները տեսնելու։

—Տեսնում էք, սրբազան, ասաց բէկը Ներսէս արքեպիսկոպոսին, որ եկել էր Շնհէրից նրան Տաթև տանելու,—մեր ձեռնարկութեան հէնց բըսկզբում մեր առջև դուրս է գալիս մի ուրացող հայ։

—Այն հայը, որի հարստահարութիւններից ազատվելու համար ձեր ծնողները իրանց այրեցին կրակի մէջ, պատասխանեց սրբազանը։—Այն կըրակից դուք միայն ազատվեցաք, բէկ։

—Այդ տխուր պատմութիւնը դուք արդէն գիտէք, սրբազան, խօսեց բէկը։—Երևում է, իմ և այդ մարդու ճակատագրի մէջ մի բան կայ, ուր կրակը մեծ դեր է խաղում...

—Այո, այն ժամանակ նա կրակ թափեց ձեր ծնողների վրա, իսկ այսօր դուք կրակ կը թափէք նրա գլխին, ասաց սրբազանը ծիծաղելով։—Հաշիւը պարզ կը դուրս գայ։

—Տեսնենք... պատասխանեց բէկը և դարձեալ ընկաւ տխուր մտախոհութեան մէջ։

Նրանք դուրս գալով ձորից, գտնվում էին այժմ մի լեռնային բարձրաւանդակի վրա, որտեղից երևում էր բոլոր շրջակայքը։ Սրբազանը, նկատելով բէկի տխուր տրամադրութիւնը, թողեց նրան, և իր ձին յետ պահելով, կանգ առեց, մինչև հասաւ Մխիթար սպարապետը Բայինդուր իշխանի հետ։

—Նայեցէք, ասաց նրանց,—նայեցէք այդ հրաշալի բնութեանը։ Սիւնեցի հայը ոչ մի բանով իրաւունք չունի գանգատվելու Աստծուն, թէ ինչու ինքը թշուառ է և օտարի ծառայ։ Երբ Աստուած մի ժողովրդի տալիս է այսպիսի երկիր, որ իր բնական ամրութիւններով ամեն յարմարութիւններ ունի պաշտպանելու նրան թշնամու յարձակումներից,—այդ ժողովուրդը ինքն է մեղաւոր, որ չէ կարողանում օգուտ քաղել Աստուծոյ շնորհած պարգևից։

Եւ իրաւ, վայրենի բնութիւնը հիացնելու չափ զքանչելի էր։ Դէպի ամեն կողմ անկանոն կերպով տարածվում էին լեռնային ցանցատեսակ շղթաներ, որոնք խիտ կերպով զետեղված էին մինը միւսի մօտ, թողնելով իրանց միջնավայրում նեղ և խորին ձորեր։ Այդ շղթաների վրա, սղոցի ատամների նման, բարձրանում էին սարերի սուր գագաթները, որ կորչում էին ամպերի մէջ։ Կուսական անտառը, որպէս մի կանաչազարդ վերարկու, ծածկում էր լեռների մերկութիւնը և նրանց աւելի անմատչելի էր դարձնում։ Ոչ մի մարդկային արարած չէր կարող ոտք կոխել այդ բարձրութիւնների վրա. միայն արագաթռիչ արծիւը այնտեղ ժայռերի պատառվածքի մէջ դնում էր իր բոյնը։

—Ճշմարիտ է, սրբազան, պատասխանեց Մըխիթար սպարապետը,—սիւնեցի հայը ինքն է մեղաւոր, որ չէ կարողացել օգուտ քաղել իր հայրենիքի ամուր դիրքերից։ Բայց Հայաստանի ո՞ր կողմը այսպէս չէ. Հայաստանը ամեն տեղ տալիս է մեզ բնական ամրութիւններ։ Բայց մեր լեռներից աւելի օգուտ են քաղել օտարները, քան թէ մենք ինքներս։

Բայինդուր իշխանը, որ լսում էր այդ խօսակցութիւնը, և ինքը ոչ սակաւ հիացած էր շրջապատող լեռներով և անտառներով, խօսակցութեան մէջ մտաւ, ասելով.

—Աստուած է վկայ, այդ ժողովուրդը մորթելու արժանի է։ Ես ինքս մեծ ուրախութեամբ կը վեր առնէի մի սուր և բոլորին կը կոտորէի։ Բայց մի զարմանալի բան կայ, որ ինքս էլ չեմ հասկանում թէ ինչ է։ Ես սաստիկ ատում եմ

---

*) Սառուլար կոչվում են Սիւնեաց աշխարհի ոսկեգոյն ձիաները, որ մի առանձին ցեղ է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Ապրիլի 22-ին

Դեռ 1875 թ. ես մի մրցանակ (prime) կարգած էի հայերէն գրված ամենաընտիր երկասիրութեան համար՝ վերաբերմամբ մեր ազգային լեզուի, գրականութեան, պատմութեան և օրէնսդրութեան, և նոյն միջոցին հայ պարբերական թերթերի մէջ հրատարակված կանոնների համեմատ որոշած էի, որ առաջի մրցութիւնը (concours) լինելու էր 1877 թւին։

Սահմանեալ ժամանակին ինձ հասուցին պէսպէս ձեռագիրներ և տպագրված շարադրութիւններ, բայց նոքա իրանց բոլոր արժանաւորութիւններով հանդերձ, մրցանակի ստացման համար գրված պայմաններին անհամապատասխան գտնվեցան՝ առաւել կամ պակաս չափով։

Յաջորդ մրցութեան (1879 թ.) մասնակցող շարադրութիւններից մրցանակը տարաւ արժ. հ. Բաստամեանի յօրինած ձեռագիր գործը հանդերձ մեկնողական ծանօթութիւններով և պատշաճաւոր յառաջաբանով՝ ընդ անուամբ «Դատաստանագիր Մխիթար Գօշի»։

Բայց որպէս զի մի յարմարաւոր գործադրութիւն տրվի և այն գումարին, որ վճարվելու էր ըստ մրցութեան 1877 թւականի, ես բաւական համարեցի առաջի առնել այդ գումարը (500 րուբլի) Թիֆլիսի մէջ հաստատված «Ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» և մրցութեան գլխաւոր նպատակից չը շեղվելու համար խնդրել նրանից, որ այդ գումարով ի լոյս ընծայվի Մովսէս Խորենացու պատմութիւնը գիւրագին և հասարակաց մատչելի տպագրութեամբ։

Վերոյիշեալ ընկերութեան վարչութիւնը ընդունելով մեր առաջարկութիւնը՝ արդէն տպագրել է տուել Մովսէս Խորենացու պատմութիւնը։

Մեծ. տէր, խնդրում եմ ձեզ, որպէս և միւս ազգային լրագիրների մեծ. խմբագիրներին, տպագրել մրցութեան հետևեալ կանոնները և յայտարարել, որ առաջիկայ մրցանակին հետամուտ շարադրութիւնները պարտ են ներկայացվիլ քննութեան ներկայ 1881 թ. ընթացքում, այս հասցէիս՝ յանուն Տէր-Յովհաննէս քահանայի Փօղոսեան. С- Петербургъ. Невскій просп. д. армянской церкви. St. Petersbourg, Perspecktive de Nevsky, maison de l'eglise arménienne.

Պայմանք մրցանակի. 1) Մրցանակի հետամուտ լինել կարող են ձեռագիր ու տպված գրաբար և աշխարհաբար ինքնուրոյն շարադրութիւնք ի մասին հայոց քաղաքական և եկեղեցական պատմութեան, ազգային օրէնսդրութեան, հնութեանց, մայրենի լեզուի և գրականութեան, որպէս և թատրոնական յօրինուածք։

2) Չեն կարող հետամուտ լինել մրցանակի՝ ա. օտար լեզուներից թարգմանված շարադրութիւնք, բ) դասագրքեր, գ) արդէն միանգամ մրցանակ գրաւած աշխատութիւնների երկրորդ և յաջորդ տպագրութիւնքը. դ) մրցանակաբաշխութեան ժամանակից երկու տարի տպված շարադրութիւնք։

3) Թատրոնական գրուածքներից պահանջվում է, որ նրանց բովանդակութիւնը հին կամ նոր ազգային կեանքից առնուած լինէր։

4) Ամբողջ մրցանակի գումարը կազմում է հինգ հարիւր րուբլի արծաթ, որ բաժանվելու է ամեն երկու տարի մի անգամ։

5) Եթէ մրցանակի մտնող գրուածքների մէջ մրցանակի արժանի գործեր գտնվեն՝ նրանք ըստ իրանց արժանաւորութեան կամ ամբողջ մրցանակը (500 րուբլի) և կամ սրա մէկ մասը կընդունեն։

Յովսէփ Իզմիրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Րիգայի լրագիրը» տալիս է հետևեալ տեղեկութիւնները Ս. Պետերբուրգից. կոմս Լօրիս-Մէլիքօվ ներկայացրեց հետևեալ պրօգրամը, որից կախված էր նրա պաշտօնի պահպանելը։ Պրօգրամը ունի հինգ կէտեր. 1) Պակասեցնել այն վճարումները, որ գիւղացիները պէտք է տան իրանց հողերը յետ գնելու համար, 2) վերականգնեցնել մի քանի քաղաքային և գիւղական իրաւունքներ, որոնք կորցրած էին իրանց ոյժը, 3) ընդարձակել քաղաքային վարչութիւնների և զէմստւօների գործունէութեան շրջանը, 4) վերցնել հալածողական քաղաքականութիւնը սահմանագլուխներում, և 5) վերանորոգել վարչութիւնը, համայնքից սկսած մինչև նահանգապետի պաշտօնը։ Այդ կէտերը քննելու համար պէտք է կանչվէին խորհրդական յանձնաժողովներ բոլոր նահանգների պատգամաւորներից բաղկացած։

—

Հարաւային Ռուսաստանում զուգընթացաբար ռուս բողոքականութեան, շտունդիզմի զարգացմանը, սկսում է յայտնվել և վերանորոգիչ շարժումը հրէական եկեղեցում։ Ռուս «Елисаветградск. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ հրէայ ինտելիգենցիան յանձն է առել հետևեալ վերանորոգիչ աշխատանքը հրէական կրօնի մէջ. «Առանց հրէայ հոգևորականութեան թոյլտուութեան, առանց փարիսեցիների և գիտնականների մասնակցութեան, առաջադէմ հրէաները իրանք յանձն առին մաքրել սուրբ գրքերը, հին կտակարանը Տալմուդի փոշիներից և կառուցանել մի նոր կրօնական, բարոյական աշխարհայեցողութիւն։ «Թող մեր ցեղակիցները, ասում են զարգացած հրէաները, պարսաւեն մեզ որ մենք սուրբ գրքերից կազմեցինք մեզ հետևեալ համոզմունքները. ամենքը պէտք է եղբայրներ լինեն, պէտք է օգնել իր նմաններին, պէտք է լինել աշխատասէր և ազնիւ, պէտք է աղօթել կարճ, հասարակ կերպով և հասկանալի լեզուով, պէտք է անձնակրթութեամբ և անձնաքննութեամբ պարապել, պէտք է աւելի յաճախ կերպով խօսակցել Աստուծու և նրա ստեղծագործութիւնների վրա, որոնք գլխաւորապէս ուսումնասիրվում են բնական գիտութիւններից, չը պէտք է փողերը տոկոսով տալ, չը պէտք է առևտուր անել ոգելից խմիչքներով, չը պէտք է պարապել ստոր փակտօրութեամբ, չը պէտք է սուտ խօսել, չը պէտք է երդվել, չը պէտք է ոչ ոխերիմ լինել, ոչ չարախօսել, ոչ ձեռքը բարձրացնել իր նմանի վրա, ոչ նախապաշարմունքներն ու մոլորապաշտութիւններն ունենալ, ոչ թուղթ խաղալ։»

—

«Южный Край» լրագիրը ասում է. «Այժմ հարաւային Ռուսաստանում կան երկու հաւասարապէս բարձր և բարոյական աղանդներ, ռուս շտունդիզմ և հրէական ազատ եկեղեցին, որոնք ապագայում կիրագործեն մալօրօսների և հրէաների միմեանց մէջ հաշտութիւնը անձնական կատարելագործութեան ճանապարհով։ Ոչ ռուսասէրները և ոչ էլ հրէասէրները, չէին երազում թէ ինչ ճանապարհով պէտք է կատարվի այդ երկու տարրերի բարոյական և հասարակական հաշտութեան գործը։» Այժմ ինքը ժողովուրդը երկու կողմից գտաւ այդ ճանապարհը։

—

Ռուս «Православное Обозрѣніе» ամսագիրը հետևեալ կերպով նկարագրում է շտունդիստների աղանդը. «Նշանաւոր է շտունդիստների բարոյականութիւնը։ Աւետարանական վարդապետութիւնը որի հիման վրա քրիստոնեան պէտք է կերակրի սովածին, հագցնի մերկին, ապաստանի խեղճին, օգնութիւն հասցնի հիւանդին և դժբաղդին՝ մեռած տառեր չեն մնում շտունդիստների համար։ Նրանք միշտ պատրաստ են օգնել կարօտ եղբօրը։ Փոխադարձ օգնութիւնը շտունդիստների մէջ կանոնաւոր կերպով կազմակերպված է։ Շտունդիստները կանոնաւոր և ճիշտ կերպով վճարում են իրանց տուրքերը և վարչութեան պաշտօնեաները ասում են թէ հարկերի ճիշտ վճարելու կողմից, որոնց պահանջելը ադմինիստրացիայի ամենադժուար գործն է, և-րանի թէ ամեն մարդ շտունդիստ լինէր։ Շտունդիստները զարմանալի տոկուն և աշխատասէր ժողովուրդ են, ինչպէս բանւորներ և արդիւնաբերողներ նրանք օրինակելի ժողովուրդ են մալօրօսների մէջ։ Եկեղեցու ծիսակատարութիւնները թողած, ոչնչացնելով պատկերներ և մասունք, նրանք հետևում են աւետարանի բուն ոգուն, կարճ և հասարակ կերպով ու մայրենի, հասկանալի լեզուով են աղօթում։ Նրանք դաստիարակում են իրանց երեխաներին ոչ թէ սպառնալիքների միջոցով, այլ խելացի, համոզեցուցիչ դատողութիւններով ու օրինակներով, ընտանիքը նրանց մէջ հիմնված է կատարեալ հաւասարութեան սկզբունքի վրա. գողութիւնը, սուտ խօսելը, հարբեցողութիւնը, թղթախաղը, բռունցքի ոյժը նրանց անյայտ են։ Ազնիւ, պատուաւոր աշխատանքը նրանց մօտ անձնական ապահովութեան միակ միջոց է համարվում։»

—

Մեզ հաղորդում են, որ հայերիս մէջ ևս հանդէս է դուրս եկել մի Լեյբայ Մօզկին, բայց այն զանազանութեամբ, որ հրէայ մանուկը տասերկու տարեկան է և սէր ունի դէպի մաթեմատիկան, իսկ այս հայ մանուկը 9 տարեկան է և սիրահար բնական գիտութեանց։ «Նորա անունը և ազգանունը Արտակ Տէր Սարգսեան է, ուսանող Ներսիսեան դպրանոցի առաջին դասարանում, որը ոչ մի տեղ չէ ուսել, բայց ընթերցանութեամբ այն աստիճան առաջացել է, որ համարեա ամբողջ ֆիզիկայի վրա տեղեկութիւն ունի՝ նոյնպէս և քիմիական բաղադրութեանց, բուսաբանութեան և կենդանաբանութեան։ Մինչև անգամ նա իր հայրենիքում ունեցել է մի աւազան, որի մէջ ժողովելիս է եղել զանազան գորտեր, ձկներ, օձեր և այլն, նոյնպէս մի մեծ վանդակ զանազան թռչուններով, ի հարկէ, որոնց վերա-

---

մեր հայերին, բայց մի և նոյն ժամանակ սիրում եմ։ Այդ ատելութիւնից բղխած սէրը ես չեմ կարողանում բացատրել ինձ։— Սիրում եմ այդ ազգը, որպէս մի սիրահար բորբոքված սրտով սիրում է մի ցած, բարոյապէս ընկած, պոռնիկ կնոջ։ Նա տեսնում է, թէ ինչպէս այդ կինը թաթախվել է բարոյական ցեխի մէջ, նա զզվում է, բայց հէնց որ աչքն ընկնում է աչքին, չէ կարողանում համբերել, սկսում է գրկել, սկսում է համբուրել նրան։ Թէև գիտէ, որ նրա մարմնի վրա ոչ մի մաքուր տեղ չի մնացել։ Մեր ազգը մի այսպիսի անբարոյական կին է. նա մի մեծ պոռնիկ է. նրա երեսին ամօթի և պատուի մի կաթիլ անգամ չէ մնացել։ Մօտ չորս հազար տարի նա պոռնկութիւն է անում, բայց տակաւին չը կշտացաւ, տակաւին չը յագեցաւ օտարներից։ Ասորեստանցին դարերով գործ դրեց նրա վրա իր անբարոյական կրքերը։ Հազարաւոր տարիներ անցկացրեց նա երբեմն յոյնի, երբեմն պարսկի և երբեմն հռոմայեցու գիրկն ընկնելով։ Մինչև անգամ անապատի սև արաբը իր հաստ շրթունքով շօշափեց նրա երեսը։ Մինչև անգամ Թուրանի տափակաքիթ, դեղնակաշի մօնղօլը դարերով պառկեց նրա հետ։ Ի՞նչ ազգ մնաց, որի վրա չը սիրահարվէր նա, որին անձնատուր չը լինէր։ Նա բոլոր օտարներին տալիս էր իր սէրը, անհաւատարիմ էր միայն իր ամուսնին, որի հետ կապված էր օրինաւոր պսակով։—Այսուամենայնիւ, ես դարձեալ սիրում եմ այդ թեթևամիտ, վավաշոտ կնոջը, որ դարերի ընթացքում, իր անբարոյական կեանքով մաշվել, տըրորվել, քրքրվել է և միայն իր վաղեմի գեղեցկութեան կմախքն է պահպանել։ Սիրում եմ այդ կմախքը։ Սիրում եմ այդ թունաւորված, հազարաւոր հիւանդութիւններով վարակված մարմինը, որից մահուան հոտ է փչում,—հիւանդութիւններ, որ նա ստացել է իր բազմաթիւ հոմանիներից, որոնց նա չափիկի նման մինը միւսի ետևից փոխում էր։ Սիրում եմ, բայց ինչու համար, ինքս էլ չը գիտեմ։ Սիրում եմ ատելով, սիրում եմ զզվելով... բայց սիրում եմ...

—Սիրելուց բղխած այդ զզուանքը, այդ դառն ատելութիւնը շատ բնական է, ասաց սրբազանը, կտրելով իշխանի խօսքը։—Դա սիրող մարդու արդար վրդովմունքն է, որ առաջ է գալիս նրանից, երբ իր սիրած առարկայի մէջ գտնում է մի որ և իցէ արատ, մի որ և իցէ բիծ, որ մաքրել չէ կարող։ Ձեր ատելութիւնը դէպի այն ազգը, որին դուք շատ խրատացի կերպով պոռնիկ կնոջ հետ համեմատեցիք, ես բոլորովին բաժանում եմ։ Այդ ատելութիւնը ցոյց է տալիս, իշխան, ձեր չափազանց բարի ցանկութիւնները, որով փափագում էք պոռնիկը դուրս քաշել իր բարոյական ցեխից և նրան օրինաւոր, պատուաւոր կեանքի սովորեցնել։ Բայց երբ նկատում էք, որ նա ուղղվելու ոչ մի ընդունակութիւն չէ ցոյց տալիս, սկսում էք բարկանալ, սկսում էք ատել, բայց չը դադարելով մի և նոյն ժամանակ սիրելույ։ Ինքը Յիսուս Քրիստոսը սիրում էր ընկած կնիկներին, սիրում էր նրանց ուղղելու համար։ Եւ նա հասաւ իր նպատակին. նրա վարդապետութեան ամենաջերմ տարածողները եղան այդ ժողովրդից մերժված կնիկները։

—Ի՞նչու ենք հեռու գնում, առաջ տարաւ սրբազանը իր խօսքը.—ահա մի մարդ, ինչպէս է մէլիք Դաւիթ ուրացողը. նա բարոյապէս ընկած մի մարդ է։ Նա դաւաճանեց իր հայրենիքին, և պարսիկների ձեռքում գործիք դառնալով, սկսեց նրան աւերակ դարձնել։ Նոյն չարագործութիւնները շարունակելու համար և պարսից լուծը մեր ժողովրդի վրա պահպանելու համար, նա կանգնած է այժմ մեր ճանապարհի վրա, որ արգելէ մեր մուտքը, որ թոյլ չը տայ մեզ պարսիկների անիրաւութեամբ տիրած երկրի վրա ոտք կոխենք։ Այսպիսի դաւաճաններին ոչ սակաւ անգամ ծնել են Հայաստանի մայրերը։ Բայց դրանք ինչով են մեղաւոր։ Դրանք արդիւնք են նոյն անբարոյականացած, նոյն փըչացած ժողովրդական կեանքի։ Հիւանդոտ կինը չէ կարող առողջ որդիք ծնել։ Հիւանդ ժողովրդից այս տեսակ հրէշներ առաջ կը գան։ Եթէ կամենում ենք, որ դրանք չը լինեն, պէտք է ուղղենք ժողովրդի առողջութիւնը,—ուղղենք նրան սիրելով։

Այդ խօսակցութիւնը, որ բոլորի համար հետաքրքիր էր, ընդհատվեցաւ։ Նրանք նկատեցին, որ բէկը բաւական տարածութիւն առաջ էր անցել։ Այժմ կանգնել էր նա և խօսում էր Ստեփաննոս Շահումեանի հետ, որին առաջուց ուղարկել էր թշնամու բռնած գիւղերը հետազօտելու։

—Ստեփաննոսը վերադարձաւ, ասաց Մխիթար սպարապետը,—տեսնենք, ինչ տեղեկութիւններ է բերել։

Երեքն էլ՝ սրբազանը, Մխիթար սպարապետը և Բայինդուր իշխանը, իրանց ձիաները թափով քշեցին, և մի քանի րոպէի մէջ հասան բէկի կանգնած տեղը։

Ստեփաննոսի բերած տեղեկութիւններից երևացաւ, որ Դաւիթ ուրացողը բռնել էր երկու գլխաւոր անցքեր, որտեղից պէտք էր մտնել Տաթև։ Մի անցքի վրա կանգնել էր նա ինքը, իսկ միւսի պահպանութիւնը յանձնել էր իր Շահ-կուլի որդուն։ Երկուսի ձեռքի տակ կային աւելի քան երկու հազար մարդիկ։

—Ես ձեզ մի ուրիշ ճանապարհով կը տանեմ, ասաց սրբազանը.— որը թէև բաւական դժուարանցնելի է և բաւական երկար է, բայց աւելի ապահով է։ Այդ ճանապարհով մենք չենք հանդիպի թշնամուն։

—Ի՞նչ օգուտ դրանից, պատասխանեց բէկը, —ես կամենում եմ անպատճառ հանդիպել նրանց։ Ինձ պէտք է այսօր ձերբակալել այդ անզգամին։

—Այդ ձեր կամքն է, ասաց սրբազանը։— Եթէ դուք վճռել էք ուղղակի նրանց վրա գընալ, իմ կարծիքով, աւելի լաւ կը լինէր փոքր ինչ սպասել, մինչև մութը պատէր։ Մենք համեմատաբար շատ փոքր թւով մարդիկ ունենք մեզ հետ։ Եթէ ցերեկով թշնամին մեզ տեսնելու լինի, մեր սակաւութիւնը նկատելով, աւելի սիրտ կառնի։ Բայց խաւարի մէջ փոքրիկ խումբերն ևս, եթէ քաջութեամբ կը գործեն, կարող են սարսափեցնել թշնամուն։

—Դուք, սրբազան, ժպտալով ասաց բէկը,— ոչ միայն հմուտ աստուածաբան էք, այլ ձեր մէջ երևում է և պատերազմական տաղանդ։

—Կատակը մի կողմ կենայ, թոյլ տուեցէք այսօր փորձել իմ տաղանդը, որը ծաղրում էք դուք։

—Այդ խիստ վտանգաւոր փորձ կը լինի։ Այսուամենայնիւ, ես կարող եմ ապահովացնել ձեզ, սրբազան, որ մինչև թշնամու մօտ հասնելը, ձեր ցանկացած խաւարը կը պատէ մեր աչերը։ Նայեցէք արեգակին, որքան թեքվել է դէպի իր մուտքը։ Եւ ես ցաւում եմ, որ դուք Յեսուի հրաշքը կատարել չէք կարող. որ արեգակը առժամանակ կանգնեցնէիք, մինչև մենք լուսով աւարտէինք մեր կռիւը։

—Դարձեալ կատակ։ Ես չեմ հասկանում, թէ դուք ինչու էք փախչում խաւարից։

—Նրա համար որ, խաւարի մէջ մենք աչքից կը կորցնէինք այն մարդուն, որին ես ցանկանում եմ այսօր անպատճառ բռնել, պատասխանեց բէկը։

Յետոյ նա իր մօտ գտնված զինուորներին երկու մասների բաժանեց. մի մասը յանձնեց Մխիթար սպարապետին և նրան Ներսէս արքեպիսկոպոսի հետ ուղարկեց ուրացողի որդի Շահ-կուլու վրա, իսկ միւս մասը ինքը վեր առնելով, ուղղակի գնաց ուրացողի վրա, իր հետ տանելով Բայինդուր իշխանին և իր սիրելի Ստեփաննոս Շահումեանին։

(Կը շարունակվի)